ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«11» սեպտեմբերի 2019 թվականի N:209 ք.Գյումրի

ԿԱՐԵՆ ԲԱԴԻՇՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N:1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ, 4-րդ, 12-րդ և 22-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 4-ի N:01/15.1/13100-19 հանձնարարականը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2019 թվականի սեպտեմբերի 5-ի N:01 //07347-2019 գրությունը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղարին փոխարինող Կարեն Բադիշյանին 2019 թվականի սեպտեմբերի 12-ից 13-ը ներառյալ գործուղել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքում կայանալիք «Տարածքային զարգացման ռազմավարական կառավարում» մասնագիտական զարգացման ծրագրի 3-րդ դասընթացին մասնակցելու նպատակով:
2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը:
3. Կարեն Բադիշյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ՝ճիշտ է